

«Յուփեյ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններ
2018թ. հունիսի 7-ից (հիմնադրման ամսաթիվ)
2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած
Ժամանակաշրջանի համար**

Բովանդակություն

| | |
|--|----|
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 6 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | 7 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն | 8 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն | 9 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 10 |



«Քեյ-Փի-Էն-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Յուլիեյ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «Յուլիեյ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2018թ. հունիսի 7-ից (հիմնադրման ամսաթիվ) 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը 2018թ. հունիսի 7-ից (հիմնադրման ամսաթիվ) 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի *Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի* (ՀԷՄՍԽ օրենսգրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատում՝ բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Ընկերությունը, կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Ղեկավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների գործընթացի վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձրագույն աստիճանն է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնությունը, կեղծիքը, միտումնավոր բացթողումները, խեղաթյուրումները կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցումը:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, այլ ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է լուրջ կասկածներ հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում

ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք կտեղեկացնենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում՝ աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի տական թերությունների մասին:

Մեր անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝


Իրինա Գևորգյան
Գործընկեր




Տիգրան Գասպարյան
Տնօրեն

KPMG Armenia LLC

| | Ծնթգ. | 2018թ. հազ. դրամ |
|--|--------------|-----------------------------|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 6 | 8,336 |
| Կանխավճարներ և այլ ակտիվներ | | 2,375 |
| Ոչ ընթացիկ ակտիվներ | | 10,711 |
| | | |
| Այլ դեբիտորական պարտքեր | 7 | 68,492 |
| Կանխավճարներ և այլ ակտիվներ | | 4,657 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 8 | 88,279 |
| Ընթացիկ ակտիվներ | | 161,428 |
| Ընդամենը ակտիվներ | | 172,139 |
| | | |
| Սեփական կապիտալ | 9 | |
| Բաժնետիրական կապիտալ | | 200,000 |
| Կուտակված վնաս | | (33,160) |
| Ընդամենը սեփական կապիտալ | | 166,840 |
| | | |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 11 | 5,299 |
| Ընթացիկ պարտավորություններ | | 5,299 |
| Ընդամենը պարտավորություններ | | 5,299 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | | 172,139 |

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Յուֆեյ» ՓԲԸ


*Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2018թ. հունիսի 7-ից (հիմնադրման ամսաթիվ) 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած
ժամանակաշրջանի համար*

| | Ծնթգ. | 2018թ. հունիսի 7-ից (հիմնադրման ամսաթիվ) 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ |
|---|--------------|--|
| Աշխատակազմի գծով ծախսեր | | (24,476) |
| Մաշվածության և ամորտիզացիայի ծախս | 6 | (478) |
| Դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ | 12 (դ) | (1,508) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | 5 | (6,698) |
| Գործառնական գործունեության արդյունքներ | | (33,160) |
| Վնաս և այլ համապարփակ ֆինանսական արդյունք ժամանակաշրջանի համար | | (33,160) |

6-ից 28-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2019թ. հուլիսի 2-ին և ստորագրվել են վերջինիս անունից:


Ռուբեն Սարգսյան
Գլխավոր տնօրեն




Հայկ Թովմասյան
Գլխավոր հաշվապահ

| հազ. դրամ | Բաժնետիրական կապիտալ | Կուտակված վնաս | Ընդամենը սեփական կապիտալ |
|--|-------------------------|-------------------|--------------------------------|
| Մնացորդը 2018թ. հունիսի 7-ի (հիմնադրման ամսաթիվ) դրությամբ | - | - | - |
| Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում | | | |
| Ներդրում բաժնետիրական կապիտալում | 200,000 | - | 200,000 |
| Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ | 200,000 | - | 200,000 |
| Ընդամենը համապարփակ վնաս | | | |
| Վնաս ժամանակաշրջանի համար | - | (33,160) | (33,160) |
| Ընդամենը համապարփակ վնաս ժամանակաշրջանի համար | - | (33,160) | (33,160) |
| Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 200,000 | (33,160) | 166,840 |

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի
ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| | Ծնթգ. | 2018թ. հունիսի 7-ից (հիմնադրման ամսաթիվ) 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ |
|--|----------|---|
| Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից | | |
| Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ, ներառյալ հարկերը | | (21,571) |
| Մատակարարներին վճարված դրամական միջոցներ, ներառյալ հարկերը | | (9,483) |
| Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ | | (31,054) |
| Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | | (10,590) |
| Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր | | (10,590) |
| Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից | | |
| Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից | 9 | 130,000 |
| Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր | | 130,000 |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ | | 88,356 |
| Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (77) |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ | | - |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ | 8 | 88,279 |

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ներածություն

(ա) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(բ) Ընկերությունը և հիմնական գործունեությունը

«Յուփեյ» ՓԲԸ-ն (Ընկերություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն 2018թ. հունիսի 7-ին: Ընկերության իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փ. 9:

Ընկերության հիմնական գործունեությունը վճարումների ընդունման ծառայությունների մատուցումն է, մասնավորապես, վերջնական օգտագործողների կոմունալ ծառայությունների վճարների, վարկերի մարումների, պետական բյուջե վճարումների ընդունումը ծառայություններ մատուցողների (Օպերատորների) և դրամական փոխանցումների իրականացումն է առցանց հավելվածի միջոցով: 2018թ-ին Ընկերությունը դեռ չէր սկսել վճարումների ընդունման ծառայությունների մատուցումը և ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական փոխանցումների իրականացման լիցենզիա էր ստացել 2018թ. դեկտեմբերի 24-ին:

Ընկերության բաժնետոմսերի 100%-ը պատկանում է «Յուքոմ» ՍՊԸ-ին: Ընկերությունը չունի վերջնական վերահսկող կողմ:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 14-ում:

2 Հաշվառման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Դրամը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են այլ նշումներ:

4 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար դեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ենթադրությունների և գնահատումների անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ենթադրում են հաջորդ ֆինանսական տարում էական ճշգրտման ռիսկ, ներկայացված է Ծանոթագրություն 12-ի (դ) կետում՝ առևտրական դեբիտորական պարտքերի համար սպասվող պարտքային վնասի գծով պահուստի չափման հետ կապված, ներառյալ՝ վնասի չափը որոշելու համար կիրառվող հիմնական ենթադրությունները:

Ընկերությունը չի ճանաչել 6,058 հազար դրամ գումարով հետաձգված հարկային ակտիվ հարկային վնասի և նվազեցվող ժամանակավարտ տարբերությունների գծով, քանի որ քիչ հավանական է, որ կունենա ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կկարողանա օգտագործել ստացված օգուտները: 28,644 հազար դրամ գումարով հարկային վնասն օգտագործելու իրավունքը սպառվում է 1-5 տարվա ընթացքում: Գործող օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գործողության ժամկետը սահմանափակ չէ:

5 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

| | 2018թ. հունիսի 7-ից (հիմնադրման ամսաթիվ) 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ |
|--|---|
| Վարձակալության ծախսեր | 2,321 |
| Շուկայավարման և գովազդի ծախսեր | 1,172 |
| Գործուղման ծախսեր | 1,029 |
| Մասնագիտական ծառայություններ | 900 |
| Գրասենյակային և կոմունալ ծառայությունների ծախսեր | 433 |
| Ներկայացուցչական ծախսեր | 400 |
| Այլ ծախսեր | 443 |
| | 6,698 |

6 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

| հազ. դրամ | Վարձակալված հիմն. միջոցների բարելավումներ | Համակարգիչներ և սարքավարումներ | Տնտեսական միջոցներ | Ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|--|---|-----------------------------------|-----------------------|-----------------------------|--------------|
| Սկզբնական արժեքը | | | | | |
| Մնացորդը 2018թ. հունիսի 7-ի դրությամբ | - | - | - | - | - |
| Ավելացումներ | 4,050 | 1,109 | 2,938 | 717 | 8,814 |
| Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4,050 | 1,109 | 2,938 | 717 | 8,814 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | | | | |
| Մնացորդը 2018թ. հունիսի 7-ի դրությամբ | - | - | - | - | - |
| Ժամանակաշրջանի մաշվածություն և ամորտիզացիա | (328) | (67) | (58) | (25) | (478) |
| Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | (328) | (67) | (58) | (25) | (478) |
| Հաշվեկշռային արժեք 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 3,722 | 1,042 | 2,880 | 692 | 8,336 |

7 Այ դեբիտորական պարտքեր

| | 2018թ. հազ. դրամ |
|--|---------------------|
| Բաժնետիրական կապիտալի համալրման համար բաժնետիրոջից ստացվելիք գումարներ | 70,000 |
| Արժեզրկման գծով պահուստ | (1,508) |
| Դեբիտորական պարտքերի զուտ մնացորդ | 68,492 |

Դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 12-ում:

8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| | 2018թ. հազ. դրամ |
|---|---------------------|
| Ընթացիկ հաշիվներ բանկերում | |
| - B1 վարկանիշով՝ ըստ «Moody's» վարկանիշային գործակալության | 88,279 |
| Ընդամենը ընթացիկ հաշիվներ | 88,279 |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում | 88,279 |

Դրամական միջոցների և դրանց համարժեքների հետ կապված պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 12-ում:

9 Սեփական կապիտալ

(ա) Բաժնետիրական կապիտալ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված և թողարկված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 200,000 սովորական բաժնետոմսից: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 դրամ: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր բաժնետիրական կապիտալը կազմում էր 200,000 հազար դրամ, որից 130,000 հազար դրամը վճարվել էր կանխիկով 2018թ. ընթացքում:

(բ) Շահաբաժիններ

Բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները: 2018թ. հունիսի 7-ից (հիմնադրման ամսաթիվ) 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանում շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել: 2018թ. դեկտեմբերի 31-ից հետո մինչև այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթիվը շահաբաժիններ չեն առաջարկվել:

10 Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Ընկերության գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու և շուկայի մասնակիցների վստահությունը պահպանելու համար:

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վճարային կազմակերպությունների կապիտալի համար սահմանված հողվածները: ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ վճարային կազմակերպությունները պետք է ապահովեն նվազագույն միջին ամսական ընդհանուր կապիտալ 100,000 հազար դրամի չափով: ՀՀ կենտրոնական բանկը կապիտալը սահմանում է որպես վճարված բաժնետիրական կապիտալի և կուտակված վնասի հանրագումարը: Միջին ամսական կապիտալը հաշվարկվում է որպես օրական մնացորդների միջին: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը բավարարում է նվազագույն ընդհանուր կապիտալի պահանջները: Ընկերության կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների պահանջներ:

11 Այլ կրեդիտորական պարտքեր

| | 2018թ. հազ. դրամ |
|---|-----------------------------|
| Վարձակալության գծով վճարվելիք գումարներ | 895 |
| Հիմնական միջոցների ձեռքբերման համար վճարվելիք գումարներ | 599 |
| Ընդամենը ֆինանսական պարտավորություններ | 1,494 |
| Վճարվելիք այլ հարկեր | 1,260 |
| Արձակուրդային վճարների գծով պահուստ | 1,645 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 900 |
| Ընդամենը ոչ ֆինանսական պարտավորություններ | 3,805 |
| Ընդամենը այլ կրեդիտորական պարտքեր | 5,299 |

Այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 12-ում:

12 Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- շուկայական ռիսկ (Ծանոթագրություն 12 (գ)),
- իրացվելիության ռիսկ (Ծանոթագրություն 12 (դ)),
- պարտքային ռիսկ (Ծանոթագրություն 12 (ե)):

(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Տնօրենների խորհուրդը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Ընկերությունը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները կունենան հստակ սահմանված դերեր և պարտականություններ:

(գ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը չի ենթարկվում արտարժույթային ռիսկի, քանի որ չունի ՀՀ դրամից տարբեր արժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Ընկերությունը չի ենթարկվում է գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանն իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի հետ կապված, քանի որ չունի տոկոսակիր ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության հեղինակությունը վտանգելու:

Ենթարկվածություն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային մարման ժամկետները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են համախառն և չզեղված գումարները, որոնք ներառում են հաշվարկված տոկոսների վճարումները և հաշվի չեն առնում հաշվանցումները::

| հազ. դրամ | <u>Հաշվեկշռային արժեք</u> | <u>Ընդամենը</u> | <u>Ցայահանջ և մինչև 2 ամիս ժամկետով</u> |
|---------------------------------------|-------------------------------|-----------------|---|
| 31 դեկտեմբերի 2018թ. | | | |
| Ոչ ածանցյալ պարտավորություններ | | | |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 1,494 | 1,494 | 1,494 |

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ նշանակալիորեն տարբեր գումարների չափով:

(ե) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում դրամական միջոցների և դրանց համարժեքների և բաժնետիրոջից ստացվելիք գումարների հետ կապված:

Ստրոկ ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

| | 2018թ. հազ. դրամ |
|--|-----------------------------|
| ԱԿՏԻՎՆԵՐ | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 88,279 |
| Բաժնետիրոջից ստացվելիք գումարներ | 68,492 |
| Պարտքային ռիսկի ընդհանուր առավելագույն չափը | 156,771 |

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը:

Այդ դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի առանձնահատկություններից և այն երկրի հետ կապված պարտականությունների չկատարման ռիսկից, որտեղ իր գործունեությունն է իրականացնում հաճախորդը:

Ընկերության դեբիտորական պարտքերի 100%-ը վերագրելի է բաժնետիրոջ հետ իրականացվող գործարքին (Ծանոթագրություններ 7 և 9): Բաժնետիրոջ հետ կապված պարտքային ռիսկը Ընկերությունը գնահատում է որպես ցածր ռիսկ:

Սպասվող պարտքային վնասի գնահատում դեկտեմբերի 31-ի դրությամբ

Ընկերությունը պարտքային ռիսկին ենթարկվող յուրաքանչյուր գործիք դասում է պարտքային ռիսկի համապատասխան դասին՝ հիմք ընդունելով այն տվյալները, որոնք օգտագործվում են վնասի ռիսկը կանխատեսելու համար (որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ արտաքին վարկանիշներ, աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ, կառավարչական հաշվետվություններ, դրամական միջոցների հոսքերի կանխատեսումներ և հաճախորդների մասին մամուլում առկա տեղեկատվություն) և կիրառելով պարտքի վերաբերյալ փորձագետների դատողությունները: Պարտքային ռիսկի դասերը որոշվում են կիրառելով որակական և քանակական գործոնները, որոնք ծառայում են որպես պարտականությունների չկատարման ռիսկի հայտանիշ և համաձայնեցված են այնպիսի գործակալությունների արտաքին վարկանիշների սահմանումների հետ, ինչպիսին «Moody’s Investor Services»-ն է:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության և բաժնետիրոջից ստացվելիք գումարներ գծով սպասվող պարտքային վնասի վերաբերյալ:

| 31 դեկտեմբերի 2018թ. հազ. դրամ | Համախառն հաշվեկշռային արժեք | | Արժեզրկումից կորստի գծով պահուստ | Արժեզրկված |
|-------------------------------------|-----------------------------------|--------|--|------------|
| | Վնասի չափը | | | |
| Բաժնետիրոջից ստացվելիք գումարներ | | | | |
| Ցածր ռիսկ | 2.15% | 70,000 | (1,508) | Ոչ |

Ընկերությունը ցածր ռիսկը սահմանում է հետևյալ կերպ.

Ցածր ռիսկ. հաճախորդն ունի բավարար հնարավորություններ դրամական միջոցների հետ կապված պայմանագրով նախատեսված իր պարտականությունները մոտակա ժամկետում կատարելու համար, և քիչ հավանական է, որ տնտեսական և գործարար պայմանների բացասական փոփոխությունները երկարաժամկետ հեռանկարում կարող են նվազեցնել հաճախորդի դրամական միջոցների հետ կապված պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու հնարավորությունը:

2018թ-ին շահույթում կամ վնասում բաժնետիրոջից ստացվելիք գումարի գծով ճանաչվել է 1,508 հազար դրամ գումարով արժեզրկումից կորուստ: Ստացվելիք գումարը դասվել է 1-ին փուլին:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 88,279 հազար դրամ գումարով բանկային հաշիվների մնացորդներ, որն իրենից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այդ ակտիվների գծով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են «Moody’s» վարկանիշային գործակալության B1 վարկանիշով խոշոր հայկական բանկում, որն իր ընդհանուր ակտիվների չափով գտնվում են երեք խոշոր հայկական բանկերի շարքում, և Ընկերությունը չի ակնկալում, որ բանկը չի կատարի իր պայմանագրային պարտականությունները:

Ընկերության գնահատմամբ ընթացիկ հաշիվների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում հիմնականում վերջիններիս կարճաժամկետ բնույթի պատճառով:

13 Գործառնական վարձակալություն

(i) Վարձակալություն, որտեղ Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ

Դեկտեմբերի 31-ի դրությամբ չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա նվազագույն վարձավճարները հետևյալն են.

| | 2018թ. հազ. դրամ |
|--------------------------|---------------------|
| Սինչև մեկ տարի ժամկետով | 8,893 |
| Մեկից հինգ տարի ժամկետով | 6,670 |
| | 15,563 |

(ii) Ըահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

| | Ծնթգ. | 2018թ. հունիսի 7-ից (հիմնադրման ամսաթիվ) 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ |
|---------------------|-------|---|
| Վարձակալության ծախս | 4 | 2,321 |

14 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Ընկերության բաժնետոմսերի 100%-ը պատկանում է «Յուփեյ» ՍՊԸ-ին: Ընկերությունը չունի վերջնական վերահսկող կողմ:

(բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

(i) Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2018թ. հունիսի 7-ից (հիմնադրման ամսաթիվ) 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար:

| | 2018թ. հազ. դրամ |
|--|---------------------|
| Ըահույթ կամ վնաս | |
| Աշխատակիցների վարձատրությունը, ներառյալ՝ աշխատավարձին վերաբերող հարկերը աշխատավարձի գծով ծախսերում | 19,444 |

(գ) Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են Ընկերության այլ գործարքները կապակցված կողմերի հետ:

| | 2018թ. հունիսի 7-ից (հիմնադրման ամսաթիվ) 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ | Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|----------------------------|---|---|
| Տարածքների վարձակալություն | | |
| Բաժնետեր | 2,321 | 895 |
| Սարքավորումների ձեռքբերում | | |
| Բաժնետեր | 599 | 599 |

Ընկերությունն ունի կապիտալի համարման նպատակով բաժնետիրոջից ստացվելիք գումար 70,000 հազար դրամ ընդհանուր չափով (Ծանոթագրություններ 7 և 9), որի գծով շահույթում կամ վնասում ճանաչվել է 1,508 հազար դրամ գումարով սպասվող պարտքային վնաս:

15 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

2019թ. հունվարից մինչև այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթիվն ընկած ժամանակահատվածում բաժնետերը կատարել է ներդրում բաժնետիրական կապիտալում 60,000 հազար դրամի չափով հաշվետու ամսաթվի դրությամբ որպես դեբիտորական պարտք ճանաչված 70,000 հազար դրամ ընդհանուր գումարից (Ծանոթագրություններ 7 և 9):

16 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունն ամբողջովին չի ապահովագրել իր հիմնական միջոցները և սարքավորումները, այն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

(գ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի Հանրապետության գործող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

17 Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

18 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջանում:

(ա) Աշխատակիցների հատուցումներ

(i) *Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ*

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար կամ շահույթի բաշխման պլանի միջոցով, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները, որոնց իրական արժեքը չի ենթարկվում էական փոփոխությունների և որոնք օգտագործվում են Ընկերության կողմից կարճաժամկետ պարտավորվածությունները կառավարելու համար:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) *Դասակարգում*

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չնարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չնարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով շահույթը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով շահույթը և վնասը:

- տոկոսային եկամուտ՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- սպասվող պարտքային վնաս և հակադարձումներ և
- օգուտ և վնաս փոխարժեքային տարբերություններից:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակված շահույթը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այսպես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը:

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Ընկերության ղեկավարությանը:

- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում դեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ ակտիվներից հավաքագրվող պայմանագրային դրամական միջոցների հոսքերից:

Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական ակտիվները, որոնք կառավարվում են և որոնց արդյունավետությունը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հավաքագրելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հավաքագրելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու համար:

Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և վարկավորման հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման հնարավորությունը,
- պայմանները, որոնք սահմանափակում են Ընկերության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ (օրինակ՝ ոչ վերադարձնելի ակտիվների հետ կապված պայմանավորվածություններ),
- առանձնահատկությունները, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքի հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, որը հաջորդում է Ընկերության կողմից ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելի փոփոխությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ վարկ տրամադրելու պարտավորվածությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

(ii) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները, կամ որում Ընկերությունը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում նախկինում ճանաչված կուտակված որևէ շահույթի կամ վնասի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Ընկերության կողմից ստեղծված կամ պահվող մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Ընկերությունը շարունակում է ճանաչել ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է նրա ներգրավվածությունը ֆինանսական ակտիվում, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ վերջինիս պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

(դ) Հիմնական միջոցներ

(i) Ծանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեքը կուտակումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի

վերականգնման ծախսերը և կապիտալացված փոխառության ծախսումները: Չեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են գուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ ծախսման հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Հիմնական միջոցների բոլոր միավորների մաշվածությունը որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների էական միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար.

- | | |
|--|---|
| - համակարգիչներ և սարքավորումներ | 3-ից 5 տարի |
| - տնտեսական միջոցներ | 3-ից 5 տարի |
| - վարձակալված հիմնական միջոցների բարելավումներ | վարձակալության գործողության 2 տարի ժամկետ |

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ե) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

(զ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսերը և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

(է) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու կարողություն սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

(ը) Ծախսերի ճանաչում

Ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխան ծառայությունը մատուցելիս:

Գործառնական վարձակալության գծով կատարված վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(թ) Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված տարրերին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարած ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասի, չօգտագործված հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որին հաշվին դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթի գումարը որոշվում է հակադարձման ենթակա համապատասխան հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների հակադարձման չափով ճշգրտված ապագա հարկվող շահույթը: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային հատուցումը կիրացվի: Այս նվազեցումները հակադարձվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթի առկայության հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է կիրառելով հարկերի այն դրույթները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալվում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

(ժ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ և ստանդարտների փոփոխություններ գործում են 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է դրանց ժամանակից շուտ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը ժամանակից շուտ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(ա) ՖՀՄՍ 16

Ընկերությունից պահանջվում է կիրառել ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտը 2019թ. հունվարի 1-ից: Ընկերության գնահատմամբ ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառումը կունենա ստորև ներկայացվող ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16-ը սահմանում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել վարձակալության համար: Վարձակալը ճանաչում օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվը, որն իրենից ներկայացնում է ելակետային ակտիվն օգտագործելու իրավունք, և վարձակալության գծով պարտավորությունը, որն իրենից ներկայացնում է վարձավճարների վճարման պարտականություն: Նախատեսված են բացառություններ կարճաժամկետ վարձակալության և ցածր արժեք ունեցող միավորների վարձակալության համար: Վարձատուի համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոփոխվում, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի:

ՖՀՄՍ 16-ը փոխարինում է ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», ՖՀՄՍԿ մեկնաբանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ մեկնաբանություն 15 «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ մեկնաբանություն 27 «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը» սահմանված վարձակալության հաշվառման ուղեցույցները:

(i) Վարձակալություն, որի շրջանակներում Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ

Ընկերությունն ավարտել է իր ֆինանսական հաշվետվությունների վրա ՖՀՄՍ 16-ի կիրառման հնարավոր ազդեցության նախնական գնահատումը, սակայն դեռ չի իրականացրել մանրամասն գնահատում: Սկզբնական կիրառման ժամանակ ՖՀՄՍ 16-ի փաստացի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա կախված կլինի ապագա տնտեսական պայմաններից, վարձակալության ժամկետը երկարաձգելու հնարավորությունից օգտվելու Ընկերության որոշումից և ստանդարտով նախատեսված պրակտիկ բնույթի պարզեցումներից և ճանաչման հետ կապված ազատումներից օգտվելու չափից:

Սկզբնական գնահատմամբ Ընկերությունը չի ակնկալում էական ազդեցություն վարձակալության այն պայմանագրերի համար, որոնց շրջանակներում այն հանդես է գալիս որպես վարձակալ:

(ii) Անցումը նոր ստանդարտին

Ընկերությունը մտադիր է սկսել ՖՀՄՍ 16-ի կիրառումը 2019թ. հունվարի 1-ից՝ կիրառելով ձևափոխված հետընթաց մոտեցումը: Այդ իսկ պատճառով, ՖՀՄՍ 16-ի կիրառման կումուլյատիվ ազդեցությունը (առկայության դեպքում) կճանաչվի որպես չբաշխված շահույթի 2019թ. հունվարի 1-ի դրությամբ տարեսկզբի մնացորդի ճշգրտում՝ առանց համադրելի տեղեկատվության վերահաշվարկի:

(բ) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և դրանց մեկնաբանություններն ըստ ակնկալիքների էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 23 «Շահութահարկի հաշվառման հետ կապված անորոշություն»*
- *Պլանի փոփոխություն, կրճատում կամ մարում (ՀՀՄՍ 19-ի փոփոխություններ)*
- *ՖՀՄՍ-ների տարեկան կատարելագործումներ, 2015-2017թթ. ժամանակաշրջան – տարբեր ստանդարտներ*
- *Կոնցեպտուալ հիմունքներին հղումների փոփոխություններ ՖՀՄՍ ստանդարտներում*